

դիւ 40,000 ամուսնութիւնք աւելի եղան քան թէ այն հինգ տարիներուն մէջ որ օտար տէրութիւնները գրաւելին: Ռուսաստան ուր ժողովուրդը գրեթէ ամենեւին չգրաւոր քաղաքական անցից, յամին 1812 քան զնախընթաց տարիներն 70,000 ամուսնութիւնք նշանաւ եղան:

Հետաքրքրական դիտողութիւն մըն է Վաղդիոյ ժողովրդեան արտաքոյ կարգի աճումը դարուս սկիզբէն ի վեր:

Հետագայ չորս թիւերը կրնան բաւական ցուցնել այս աճմանս համեմատութիւնը.

1700	Վաղդիա ունէր	19,669,320	բնակիչ,
1762	" "	21,769,163	"
1801	" "	27,349,003	"

Իսկ հիմա Վաղդիոյ բնակչաց թիւը 36 միլիոնը կ'անցնի:

Լ.յս աճմանս պատճառը կը կարծուի թէ ծաղկի պատուաստին գործածութիւնն ըլլայ, որ մահուան հաւանականութիւններն հեռացնելով՝ ծննդոց թուոյն վրայ անուղղակի ազդեցութիւն մը ունի: Իսկ միջական կեանքը պատուաստն երկրնցուց, վասն զի յառաջ քան զյեղափոխութիւնը 28 ու կէս տարի էր, հիմա 31 ու կէս տարի է:

Ըստ պատճառներ կրնան ազդեցութիւն ունենալ ծննդոց թուոյն վրայ, առնցմէ մէկ գլխաւորն ալ կլիման է: Վիտուած է որ հետզհետէ հասարակածին մօտենալով կանանց բեղնաւորութիւնն ալ երթալով կ'աճի: Լհաւասիկ դենք հոս տղայոց թուոյն վրայ եղած դիտողութիւններն ըստ ընտանեաց Լարոպիոյ այլ և այլ գաւառներուն մէջ.

1,000 ընտանիք կու տան

Թագաւորութիւն Երկուց-Սիկիւեայց	5,556	տղայք
Գաւառ Վենետիոյ	5,444	—
Թագաւորութիւն Վիւրթեմպերկի	5,433	—
Թագաւորութիւն Պրիւսիոյ	5,296	—
Թագաւորութիւն Բորդուկալի	5,184	—
Գաւառ Միլանո	5,007	—
Մեծ-Դքսութիւն Հէսէի	4,813	—
Աւստրիա	4,725	—
Հոլանտա	4,670	—
Մեծ-Դքսութիւն Մէքլեմպուրկի	4,639	—
Թագաւորութիւն Բրուսիոյ	4,570	—

Ռուսաստան	4,537	—
Վաղդիա	4,148	—
Հանովը	4,121	—
Շուէտ	4,112	—
Նորվեկիա	3,965	—
Հոլլանդի	3,769	—
Տանիմարգա	3,693	—
Բրիտանական կղզիք	3,065	—

Յուցակիսնայելով կը տեսնուինուազութիւն մը բեղնաւորութեան դէպ ի հիւսիս յառաջ խաղալով: Լ.յս տարբերութիւնն զգալի է բաղդատելով Լըկուց-Սիկիւեայց թագաւորութիւնն ի գլիոյ հետ, որ ցուցակիս երկու ծայրերը կը գտուին:

Հոս միայն Լարոպայի այլ և այլ գաւառաց մէջ եղած դիտողութիւնները դրինք. հակառակ կլիմայից մէջ այս տարբերութիւնն ալ աւելի զգալի է. ինչպէս Լրէնլանտիա, ըստ պատմելոյ ճանապարհորդաց, 1,000 ընտանեաց հազիւ 2,000 տղայք կը պատկանին, ուր ընդհակառակն Պրագիւ 1,000 ընտանեաց իբր 4,400 տղայք կը պատկանին: Հետեւաբար ինչպէս երազ այս երկրին բնակիչը կրնար կրկնապատկուիլ, թէ որ սաստիկ տարափոխիկ հիւանդութիւններն, որ այս կլիմայիցս յատուկ են, մեծ կոտորած չբերէին անդադար:

Հաշիւ եղուած է որ բոլոր Լարոպայի մէջ, ըստ ծննդոց, արու բնակչաց թիւը պէտք էր աճել 4 միլիոն քան զի գաց, եթէ այս առաւելութիւնս աւելնէ որ չնուազէր այն բազմութիւ պատահարներէն, որոնք աւելի կը սպառնան մարդուս կենացը քան թէ կանանց:

Գետնադարձութիւն Բարիզոյ:

Լաշիկայ փետրուարի վերջին շաբթուն մէջ որ մը մասնաւոր ճարտարապետներ իրենց շրջանաւոր այցելութիւնը տուին Բարիզու գետնադարձեանաց: Լ.յս այցելութեանց վախճանն է դիտել մեծամեծ շինուածոց հաստաւ տուութիւնը, որոնք վեր բռնել են այն

գետնափոր գերեզմանաց կամարները ,
որոնց վրայ շինուած է Ռարիզու մէկ
մասը , Սէյն գետին աջակողմը : Ռարե-
էմ կ'ըծնէ ըսուած օրագրէն կը քաղենք
հետեւեալ տեղեկութիւններն այս ան-
գամուան այցելութեան վրայ :

« Ընդհանրապէս քանի մը հոգւոյ
թոյլ կը տրուի ընկերելու ճարտարա-
պետաց հետ , որ 'ի պաշտօնէ այց
կ'ելլեն գետնադամբանաց : Եւ այս
առթով միայն կը բացուին գետնա-
դամբանք հասարակաց : Վստանը-
հինգ տարի առաջ ասոնք մեծ հետա-
քրքրութեան նիւթ էին , և շրջա-
գայութեանց տեղիք . բայց խել մը
դժբախտ պատահարներ ստիպեցին
կառավարութիւնն արգիլելու առան-
ձնակի այցելութիւնները :

« Երես կը մտցուի մաքսի շէնքին
գաւթէն , դժոխոյ ըսուած հին արգե-
լոյին մօտ : Յառաջ քան բացուելու
վիթխարի դուռն , ուսկից կը տես-
նուին առաջին ոտքերն անձուկ ու սա-
հեցուն սանդղոյ մը , իւրաքանչիւր
այցելուի մէյմէկ ճրագ կը տրուի , որ
պէտք է վառ պահել մինչև վերջը :
Հոն պահապան մը մէկիկ մէկիկ կը
համրէ ներս մտնողները :

« Ետ իջնելու իբր 20 մէդր գետ-
նին տակը , ճամբայ մը ընդ առաջ
կ'ելլէ , որուն պատերն ու կամարը
աղիւսով հիւսուած են , տեղ տեղ
ալ զինկէ թիթեղ հագուեցուցած ,
ջրոց մզումն արգիլելու համար : Եւս
ճամբան երկայն ու նեղ է , այնպէս
որ երկու հոգի քովէ քով չեն կրնար
անցնիլ , և դէպ 'ի Սոն-Սուրի ը-
սուած դաշտը կ'երթայ , յետ բազ-
մաթիւ խոտորմունքներէ , որոնց մէջ
առաջնորդի տեղ կը ծառայէ սև լայն
նիշ մը կամարին վրայ քաշուած : Եւս
գիծը սանդղէն կը սկսի ու կ'երթայ
մինչև դամբարանն , ուր դիզուած են
ատենով Ռարիզու շրջափակին մէջ
եղած գերեզմանատեղիներէն այլ և
այլ ժամանակ հանուած ոսկորները :

« Վստան վայրկեան գետնադամբա-
նաց մէջ յառաջելէն ետև , պահա-

պանը նորէն կանկ կ'առնու դամբանա-
րանին դրանն առջև՝ երկրորդ անգամ՝
համրելու այցելուները : Արոնք սկըզ-
բան ուրախ զուարթ կը խօսակցէին
իրարու հետ , կամ գուցէ կատակ կ'ը-
նէին . բայց տեղւոյն եզակիանութիւ-
նը , նորանշան հօտն՝ որ հոն միայն
կրնայ առնուիլ , խուլ հեռաւոր աղա-
ղակներն որ այն խաւարչտին ճանա-
պարհաց մէջ կը լսուին , որոնք բազ-
մաթիւ քառուղիներու կը բաժնուին ,
վերջապէս այս ամէնը միանգամայն
խոր տպաւորութիւն մը կը պատճա-
ռեն այցելուաց վրայ և զրեթէ բաց-
արձակ լուծիւն մը կը տիրէ :

« Երես կը մտնեն , դիմացնին թըղ-
թեայ սպիտակ տախտակ մը կ'ելլէ ,
վրան Ոգիսականին այս տողը գը-
րուած . Մի արհամարհէ՛ք հանգուցելոյ
որոշումները :

« Եւրի ընդարձակ ճամբաներով ,
մերթ ուղղագիծ և մերթ բոլորաձև ,
առաջ կ'երթան մարդկեղէն ոսկերաց
երկու պարսպաց մէջ տեղէն , վեց
ոտք բարձր : Եւս գերեզմանական
պարսպաց արտաքին երեսը բաղկա-
ցած է մարդկեղէն ոլոքներէ , որոնք
իրարու վրայ յարմարցուած են նման
փայտի դիզարանաց : Արին եզերա-
յը վրայ գանկերէ շրջանակ մը ձևա-
ցուած է , որ կարծես թէ այցելու
անցորդաց վրայ կը նային : Եւս ան-
դին կը կարդացուին Լըմիէռի , Լա-
մարդինի , Տըլիւի և Սալֆիլագրի
տողեր : Եւս և այլ արձանագրու-
թիւններ ալ կ'իմացնեն թէ դէզ
դէզ ոսկորներն որ գերեզմանատե-
ղիքներէն կու գան :

« Եւսնձին մէկ կողմ մը ոսկերաց
մեծ դէզ մըն ալ կայ , որ տակաւին կը
սպասէ գերեզմանական ճարտարա-
պետին , որ կարգաւորէ զանոնք : Եւ-
րեք միլիոն կը համարուի դարերէ 'ի
վեր գերեզմանատեղեաց մէջ ժող-
վուած մեռելոց թիւը , որոնց մնա-
ցորդներն ընդունեն են գետնադամ-
բանք : Եւս ճամբաներուն մէկուն
մէջ կը տեսնուի Վիլպերի գերեզմա-

„ Եւր , այս հետեւեալ հռչակաւոր տու-
„ զերով

Ի փենցաղոյս յայս խրախճան
կացեալ զըժբաղդ եւ մեռանիմ
Ես առօրեայ բազմական .
Սեռանիմ գնամ յամր ի շիրիմ ,
Յոր ոչ ելցեն այցելուք ,
Ոչ կաթեսցեն արտասուք :

„ Սրոյ քանի մը բարակ երակներ
„ ստորերկրեայ աղբիւրներէ բղխելով
„ շատրուան մը կը ձեւացնեն , որ կ'ը-
„ սուի Շապորահան Սամարայայն : 1813ին
„ մէջը քանի մը ոսկեգոյն Չինաստանի
„ ձկներ ձգեցին , որոնք երկար ժամա-
„ նակ ապրեցան , բայց չբազմացան :

„ Եւս կամարակապ ճամբաներս ,
„ որոնցմէ մէկն ինչուան 7 հազարա-
„ մէջը երկայն է , թանձր օդ մը ու-
„ նին , նեղիչ խոնաւութեամբ մը զան-
„ դուած : Եւսմանակէ մը ետեւ այցե-
„ լուք սրտի անձկութիւն մը կը զգան :

„ Եւցելութիւնը լմննալէն վերջը ,
„ դամբարանին դուռը կը գոցուի , և
„ նորէն այն սե գծին ետեւէն կ'եր-
„ թան : Եւրբոր սանդղոյն կը հասնին
„ ուսկից որ ներս մտան , պահապանը
„ դարձեալ կը համրէ այցելուները , չը-
„ լայ թէ մարդ պակաս ըլլայ : Որոնք
„ երբոր լոյս կը տեսնեն , մեծ հաճու-
„ թիւն մը կը զգան , — մասնաւորապէս
„ կանայք , որոնք այս անգամ բազմա-
„ թիւ էին , — և անպատմելի սփոփանք
„ մը :

Մանր գիտելիք :

Գեղեթիւն : — Ըստ հաւանական հաշուի ան-
գղիացի լրագրի մը , մինչև հիմա փորուած ածխա-
բեր երկրին մակերևոյթն է իբր 20,711 քառա-
կուսի հազարամէջը , միջին խորութիւնն 9 մէթր :
Արդ բազմաթիւ իրարու հետ երկրիս ընդերայ
մէջ թաղուած ածուխն ու տարուէ տարի սպա-
ռուած ածուխը , մարդս կրնայ ապահով ըլլալ որ
գեղեթիւն բաւական ածուխ մինչև Երեսնամեջ հա-
զար քառակուսի հանուած ածուխին գինն
է 937,300,000 ֆրանգ . այնպէս որ տարուան մը

մէջ ելած մեծայարգ մետաղները միանգամայն այս-
չօք արժէք չունին :

Վարդէլուր առանց Լուրանոյ : — Լրագրոց մէջ
հետեւեալ հնարքը կը կարգանք վարդէլուր հանե-
լու առանց թորանոցի :

Պէտք է ընտրել մայիսի հոտաւէտ վարդերը , և
առնուլ անոթ մը 45 կամ 50 հարիւրորդամէջը
բարձր , բերանը լայն , յատակն անձուկ , ու ներ-
քին կողմը վեռնիճոտած : Բերանոյն վրայ հաս-
տատէ խոշոր հիւսուած կանեփեայ լայն կտաւ
մը , որ անոթին մէջ կախուի քսակի նման , որուն
մէջ կը լեցուին վարդին ծաղկաթերթերը : զորոնք
ծածկէ նոյն կտաւով ու վրան փակուր մազտա-
քէով երկաթի կամ անագէ թիթեղ մը , այն-
պէս որ ճիշդ անոթը խփէ : Դիր աշխարհի վրայ
տաք մոխիր , և վառէ թեթեւ ու հանգարտ կրակ
մը միակերպ , վառն զի սաստիկ կրակը ծաղկաթեր-
թերը կ'այրէ , և բոլոր աշխատութիւնն անպտուղ
կը մնայ :

Վարդին հոտաւէտ մասը կը կաթէ անոթին յա-
տակը՝ ծաղկաթերթից մէջ բովանդակուած ջրով ,
երբ կը հասկըցուի որ ալ ջուր չկաթեր ծաղկա-
թերթերէն , շուտ մը կրակը մարէ , և յառաջ քան
բանալու անոթին բերանը թող որ բոլորովին պա-
ղի , և գործողութիւնը կը լմննայ :

Իրաւ այս կերպով հանուած վարդէլուրը յըս-
տակ չէ , ինչպէս է թորանոցէ ելածը . բայց անոր
ամէն որակասութիւններն ունի :

Գործաւոր Խանայ , Անգղիա : — Ըստ վերջին աշ-
խարհահամարին Անգղիոյ մէջ զարգարար և գեր-
ձակ կանանց թիւն էր 267,711 . շապկեղէն գոր-
ծող և կարող կանանց թիւն էր 73,068 : Միայն
Պրիմիկէմի մէջ աւելի քան 1100 ու 1200 աղջ-
կունք մետաղեայ գրչաց գործարանները կ'աշխա-
տին , 600 աղջկունք անագէ գրչաց գործարաննե-
րը , և 300 աղջկունք գնդասեղաց գործարաննե-
րը : Լոնտրա աւելի քան 150,000 գործաւոր կա-
նայք կան , որոնց աւուրչէքն երբեք չանցնիր
1-25 ֆրանգն . ու շատ անգամ մեծ բաղդ կը հա-
մարուի եթէ կարող ըլլան ասոր կէտը վաստակել :
Բոլոր տարին , միջական հաշուով , աշխատութիւ-
նը չկրնար տալ այն թշուառներուն օրն 50 հա-
րիւրորդէն աւելի :

Նոր Բիւնիսի և Բրիտանիա : — Սան-Ֆրանցիս-
գոյ 'ի Չիլէ մօտերս նոր ոսկեհանք և արծաթա-
հանք գտուեր են , շատ աւելի հարուստ քան մին-
չև հիմա եղածներն : Այս աւետեաց երկիրը Վա-
շի կ'ըսուի , և Գալիֆոռնիայէն սկսան բազմաթիւ
գաղթականներ երթալ այս հանքերը փորելու , որ
մէկ տակառաշափ հողէն 10,000 տոնարի մետաղ
կ'ելլէ : Գալիֆոռնիոյ ներսերէն եկած լուրերը
կը պատմեն թէ բնակիչներն այն կողմանց , կար-
գաւորեալ գաղթականներ բաժնուած , սկսեր են
իմանալ թէ ինչպէս այն բերրի դաշտերը մշակելն
չահաւէտ է և անսպառ քան թէ ոսկւոյ հանքերը :